

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԳՐԲԵՉԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԳԻ ՓՈՒԼՈՒՄ

Կ.Ռ. Սերոբյան

Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Յոդվածում քննարկվում են ԵՄ-Ադրբեջան համագործակցությունը էներգետիկ ոլորտում, ԵՄ-ի կողմից՝ Ադրբեջանի նկատմամբ որդեգրած քաղաքականությունը, դրա պատճառները, փորձ է արվում պարզել, թե ինչպիսի ազդեցություն ունի Ադրբեջանում գործող վարչակարգը, ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ոտնահարումները երկկողմ համագործակցության ոլորտում, ինչպես նաև պարզել, թե ինչն է ետ պահում ԵՄ-ին Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելուց:

Բանալի բառեր. ԵՄ, Ադրբեջան, էներգետիկ ոլորտ, ավտորիտար վարչակարգ, ժողովրդավարություն:

1991 թվականին ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ երկրները բախվեցին մի շարք մարտահրավերների, որտեղ առանցքային մոտեցում պահանջող խնդիրներից մեկը նրանց՝ արտաքին քաղաքականության մշակման և կողմնորոշման խնդիրն էր: ԽՍՀՄ փլուզումից հետո ձեռք բերելով անկախություն՝ Ադրբեջանը հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում ընտրեց միջազգային բազմակողմ հարաբերություններ զարգացնելու հետևյալ տարբերակը՝ ազգ-պետության կառուցում և միաժամանակյա ինտեգրացիա ԱՊՀ և եվրոպական ժողովրդավարական չափանիշների շրջանակներում¹. վերջինս սերտորեն համագործակցում է ԵՄ-ի հետ, դրա հետ մեկ տեղ հանդիսանալով ԱՊՀ անդամ երկիր: Սակայն, եվրոպական ժողովրդավարական արժեքների տեսանկյունից Ադրբեջանը խնդիրների է բախվում, քանի որ ըստ միջազգային վարկանիշավորման կազմակերպությունների՝ այն ոչ ժողովրդավար և անազատ երկիր է, որտեղ առկա է խիստ ավտորիտար վարչակարգ², և, չնայած սրան, շարունակում է լուրջ նշանակու-

¹ Թորոսյան Տ., Միջազգային հարաբերությունների ձևավորման այլընտրանքները հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում, *Չայկական Քաղաքագիտական Հանդես*, N 2(2), 2011 էջ 18-32:

² Freedom House, *Country Profile; Nations in Transit Score; Democracy Score in Azerbaijan*, <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/azerbaijan>, (05.06.20).

թյուն ունենալ միջազգային ինտեգրացիոն կառույցների, այդ թվում նաև ԵՄ-ի համար, հատկապես էներգետիկ ոլորտում շնորհիվ էներգետիկ հարուստ պաշարների, ինչպես նաև աշխարհագրական դիրքի՝ գտնվելով Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում:

ԵՄ-Ադրբեջան հարաբերությունները հիմնված են «Գործընկերության և համագործակցության համաձայնագրի» հիման վրա, որն ուժի մեջ մտավ 1999 թվականից, իսկ 2017 թվականից կողմերը սկսել են բանակցությունները երկկողմ հարաբերություններին նոր թափ հաղորդելու և փոխշահավետ համագործակցության շրջանակներն ավելի լայն դարձնելու նպատակով: ԵՄ-ն Ադրբեջանը համարում է էներգետիկ առումով ռազմավարական գործընկեր, որը նաև առաջնային դերակատարություն ունի կասպյան էներգառեսուրսները դեպի ԵՄ շուկա հանելու տեսանկյունից³: ԵՄ-Ադրբեջան հարաբերություններն էապես հիմնված են էներգետիկ ոլորտի և նրա աշխարհագրական ռազմավարական դիրքի վրա: ԵՄ-ն հանդիսանում է ադրբեջանական նավթի առաջնային սպառողներից մեկը: Չարավային գազային միջանցքը, ևս, ռամավարական նշանակություն ունի, քանի որ դրա միջոցով կասպյան ծովից արտահանվում է գազը դեպի Եվրոպական շուկաներ⁴:

Նախատեսվում է, որ ենթակառուցվածքները, որոնց միջոցով կասպյան ավազանից գազ կմատակարարվի, կկառուցվի արդեն իսկ գոյություն ունեցող Չարավկովկասյան գազամուղի ընդարձակման շնորհիվ, որն Ադրբեջանից կհասցնի գազը դեպի Եվրոպա՝ Վրաստանի և Թուրքիայի միջոցով: Անհրաժեշտ է նշել, որ Տրանսսանատլիական գազատարը գտնվում է Թուրքիայի հետ խաչմերուկում և կապում է Վրաստանը Եվրոպային, իսկ Տրանսադրիատիկ գազատարը Թուրքիայի սահմանից Յունաստանի և Ալբանիայի միջոցով հասցնում է գազը Իտալիա: Նախատեսվում է, որ մինչև 2020 թվականը Շահ Դենիզ 2-ը Եվրոպական շուկայում կապահովի տասը բիլիոն խորանարդ մետր գազ ամեն տարի⁵:

ԵՄ-Ադրբեջան քաղաքական երկխոսության կարևորագույն հիմքերն են

³ *European External Action Service, EU-Azerbaijan relations - factsheet, <file:///C:/Users/User/Downloads/eeas - european external action service - eu-azerbaijan relations - factsheet - 2019-09-11.pdf>, (05.06.20).*

⁴ *FACTS AND FIGURES ABOUT EU-AZERBAIJAN RELATIONS; IMPORTANT ENERGY PARTNER, https://eeas.europa.eu/sites/eeas/files/eap_factsheet_azerbaijan_eng.pdf, (05.06.20).*

⁵ *FACTS AND FIGURES ABOUT EU-AZERBAIJAN RELATIONS; IMPORTANT ENERGY PARTNER, https://eeas.europa.eu/sites/eeas/files/eap_factsheet_azerbaijan_eng.pdf, (05.06.20).*

2006 և 2011 թվականներին կնքված «Էներգետիկ ոլորտում ռազմավարական համագործակցության փոխըմբռնման հուշագիրը» և «Հարավային գազային միջանցքի մասին համատեղ հռչակագիրը»: Ադրբեջանն իր էներգետիկ ռեսուրսների շնորհիվ՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի միջոցով, հնարավորություն է տալիս ԵՄ-ին դիվերսիֆիկացնել վերջինիս էներգետիկ ռեսուրսները՝ այս առումով թուլացնելով կախվածությունը ՌԴ-ից⁶, քանի որ ԵՄ-ն հանդիսանում է ՌԴ-ի ներդրումային գլխավոր գործընկերը: Հարկ է նշել, որ ԵՄ տարածքում ՌԴ-ն գլխավորում է գազ մատակարարող երկրների ցուցակը: ԵՄ ներկրվող նավթի 40%-ը մատակարարում է ՌԴ-ն⁷, իսկ 2017 թվականի տվյալներով, ԵՄ-ին մատակարարվող ամնշակ նավթի համարյա երկու երրորդը ապահովվում է ՌԴ-ի կողմից (30 %), այն դեպքում, երբ Ադրբեջանն իրականացնում է ԵՄ նավթի մատակարարման ընդամենը 5%-ը, իսկ բնական գազի 40 %-ը կրկին մատակարարում է ՌԴ-ն⁸: Այսպիսով, ԵՄ-ի համար անհրաժեշտություն է վերացնել կախումը կոնկրետ մեկ մատակարարից՝ չվտանգելու իր իսկ էներգետիկ անվտանգությունը:

Ուսումնասիրելով ԵՄ-Ադրբեջան փոխգործակցությունը էներգետիկ ոլորտում՝ անհրաժեշտ է նշել, որ, չնայած նրա էներգետիկ մեծ պաշարներին և դրանց մատակարարմանը դեպի եվրոպական շուկաներ, այնուամենայնիվ, կարելի է նկատել, որ առաջին հայացքից համեմատության տեսքով Ադրբեջանը չունի այնքան առանցքային կարևորություն էներգետիկ մատակարարումների ապահովման տեսանկյունից, որքան ունի, օրինակ, ՌԴ-ն: Սակայն, ինչպես նշվեց, անհրաժեշտ է ապահովել էներգետիկ անվտանգությունը՝ դիվերսիֆիկացնելով այն: Սա, ևս փաստում է այն, որ Ադրբեջանն ունի մեծ կարևորություն ԵՄ-ի համար, և երկկողմ հարաբերություններն, այնուամենայնիվ, կշարունակեն խորանալ:

Այսպիսով, ինչպես արդեն նշվեց, Ադրբեջանը մշտապես առանձնացել է ոչ ժողովրդավար վարչակարգով, մարդու իրավունքների և հիմնարար այլ ազատությունների ոտնահարման բազմաթիվ դեպքերով, ստանձնած պար-

⁶ European Parliament, *EU Relations With Armenia and Azerbaijan*, [http://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2017/603846/EXPO_IDA\(2017\)603846_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2017/603846/EXPO_IDA(2017)603846_EN.pdf), (05.06.20).

⁷ А.В. Коротун, *Проблемы и перспективы развития Европейского Союза в начале XXI века*, с. 76

⁸ *From where do we import energy and how dependent are we?*, <https://ec.europa.eu/eurostat/cache/infographs/energy/bloc-2c.html>, (05.06.20).

տավորությունների խախտմամբ, ինչը փաստում են նաև միջազգային վարկանիշային տարբեր կառույցների կողմից ներկայացվող զեկույցները⁹: Այսպիսիով, Ադրբեջանում տիրում է ավտորոտար, անազատ վարչակարգ, որտեղ ազատ չէ նաև մամուլը¹⁰, և, ըստ «Էմենեսթի ինթերնեշնալ» միջազգային կառույցի, այստեղ լրատվական բոլոր միջոցներն անմիջականորեն գտնվում են ադրբեջանական կառավարության ուղիղ վերահսկողության ներքո¹¹: Նույն ԵՄ-ի տարեկան զեկույցում Ադրբեջանում մարդու իրավունքների և ժողովրդավարության ներկա վիճակը որակվում է «մտահոգիչ»: Ըստ ԵՄ տարեկան զեկույցի՝ այստեղ ոտնահարվում են քաղաքացիների՝ ազատ կամարտահայտման, հավաքների և հիմնարար մնացյալ ազատություններն ու իրավունքները, որտեղ խոսվում է նաև վերջին շրջանում լրագրողների ձեռքակալությունների մասին¹²:

Ադրբեջանի էներգետիկ հարուստ պաշարները և ծանր վիճակում գտնվող մարդու իրավունքները հարցեր է առաջացնում ԵՄ անդամ պետությունների մոտ, որոնք, սակայն հաշվի առնելով իրենց ազգային շահերը, զարգացնում են երկկողմ սերտ փոխգործակցություն Ադրբեջանի հետ: Նման երկրները, որոնք իրենց արտաքին քաղաքականության շրջանակներում առաջնահերթություն են տալիս մարդու իրավունքների պաշտպանությանը, հատկապես հյուսիսային երկրները, քննադատորեն են վերաբերվում Ալիևի կառավարության կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ ոտնահարումներին¹³: Այս տեսանկյունից

⁹ Freedom House, *Freedom in the World; Azerbaijan*, <https://freedomhouse.org/country/azerbaijan/freedom-world/2020>, «Ադրբեջանում ավտորոտար վարչակարգի պայմաններում ինչխանությունն ամբողջովին կենտրոնացած է Իլիևի Ալիևի և վերջինիս ընտանիքի ձեռքում, որը նախագահում է 2003 թվականից: Այստեղ լայն տարածում ունի կոռուպցիան, իսկ ընդդիմությունը երկարատև ճնշումների արդյունքում գնալով թուլացել է: Ընդդիմության կողմից վերջին տարիներին քաղաքացիական հասարակության նկատմամբ համատարած հետսպնդումների արդյունքում ազատ արտահայտման և քաղաքացիական շարժումներ իրականացնելու հնարավորությունը»:

¹⁰ Freedom House, *Country Profile; Nations in Transit Score; Democracy Score in Azerbaijan*, <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/azerbaijan>, (05.06.20).

¹¹ Amnesty International, *AZERBAIJAN 2017/2018*, <https://www.amnesty.org/en/countries/europe-and-central-asia/azerbaijan/report-azerbaijan/>, (05.06.20).

¹² European Union; *External Action; EU Annual Report on Human Rights and Democracy in the World (Azerbaijan)*, https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/62282/eu-annual-report-human-rights-and-democracy-world-azerbaijan_en, (05.06.20).

¹³ Merabishvili G., *The EU and Azerbaijan: Game on for a more normative policy?*, CEPS Policy Brief, No. 329, March 2015.

հատկանշական է, որ ԵՄ-ի կողմից պատժամիջոցներ սահմանվեցին Բելառուսի վրա, 2010 թվականի նախագահական ընտրություններից հետո ընդդիմության նկատմամբ ակցիաների ընթացքում կիրառած ճնշումների պատճառով, որոնց շրջանակներում ակցիայի բազմաթիվ մասնակիցներ ձերբակալվել էին: ԵՄ-ն Բելառուսի նկատմամբ էմբարգո էր սահմանել 2011 թվականին, որով արգելվում էր Բելառուսին վաճառել, մատակարարել, փոխանցել սպառազինություն, որը կարող է կիրառվել ներքին ռեպրեսիաների դեպքում, իսկ 2019 թվականի փետրվարին ԵՄ-ն ևս մեկ տարով երկարաձգեց այդ պատժամիջոցները¹⁴: Իսկ ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այստեղ պատժամիջոցների կամ նման ոտնահարումների վերաբերյալ հայտարարությունների փոխարեն, դեռևս 2016 թվականին ԵՄ գերագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին իր Ադրբեջան կատարած այցի ընթացքում նշեց, որ Ադրբեջանը Եվրոպային էներգիայի մատակարարման վստահելի և կարևոր աղբյուր է, ինչպես նաև Եվրոպայի ռազմավարական կարևոր գործընկերն է¹⁵:

Այս երկու երկրների նկատմամբ ԵՄ վարած քաղաքականության միջոցով կարելի է պարզել ԵՄ վերաբերմունքը ավտորիտար երկրների նկատմամբ: Սակայն, ակնհայտ է, որ ԵՄ-ի կողմից Ադրբեջանի նկատմամբ տարվում է ընդգծված կերպով այլ քաղաքականություն: Նման քաղաքականությունը պետք է պայմանավորել Ադրբեջանի էներգետիկ ռեսուրսների առկայությամբ, որի միջոցով, կարելի է փաստել, որ ԵՄ-ն դեռևս արթուն է պահում բռնատիրական նման վարչակարգը, քանի որ էներգետիկ պաշարները, անկախությունը Արևմուտքից և նրան տրվող կարևորությունը ԵՄ-ի կողմից որպես էներգետիկ մատակարար, զնալով նվազեցնում է ժողովրդավարական ռեֆորմների հավանականությունը Ադրբեջանում:

Հատկանշական է նաև, այն, որ այստեղ պետության կառավարումը և մնացյալ այլ ոլորտներն ամբողջովին կենտրոնացած են քաղաքական էլիտայի ձեռքում, իսկ ինչ վերաբերում է ընդդիմությանը, ապա այստեղ առկա չէ ուժեղ ընդդիմություն, ու դրա հետևանքով է, որ ԵՄ-ն սկսել է մեծ

¹⁴ European Council, *Belarus: EU prolongs arms embargo and sanctions against 4 individuals for one year*, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2019/02/25/belarus-eu-prolongs-arms-embargo-and-sanctions-against-4-individuals-for-one-year/>, (05.06.20).

¹⁵ *Delegation of the European Union to Azerbaijan, Federica Mogherini visits Azerbaijan*, https://eeas.europa.eu/delegations/azerbaijan/3585/node/3585_el, (05.06.20).

դերակատարություն տալ քաղաքացիական հասարակությանը, որոշակիորեն ,հույսը դնելով վերջինիս վրա¹⁶: Սա հաստատվեց հատկապես 2006 թվականին, երբ Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ԵՄ կառույցներն ընդունեցին, որ մարդու իրավունքների, օրենքի գերակայության և ժողովրդավարության ոլորտում համագործակցությունը անդամ պետությունների կառավարությունների հետ այնքան արդյունավետ չէ, որքան վերջիններիս քաղաքացիական հասարակությունների հետ համագործակցությունը: Դրանից հետո արդեն Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ԵՄ-ի կողմից տարածվող հայտարարություններում սկսվեցին քաղաքացիական հասարակության կարևորության մասին լուրջ շեշտադրումներ արվել¹⁷:

Ակնհայտ է դառնում, որ բնական հարուստ պաշարներ և էներգառեսուրսներ ունեցող երկրները՝ ի դեմս Ադրբեջանի, կարող են օգտագործել նշված հարստություններն ոչ միայն տնտեսական շահ ձեռք բերելու, այլ նաև արտաքին և ներքին քաղաքականության շրջանակներում իրենց դիրքերն ավելի խորացնելու և դերակատարությունը մեծացնելու նպատակով: Ավտորիտար վարչակարգերի պայմաններում, ինչպես կարելի է տեսնել, բնական պաշարները, ևս, կիրառվում են ներքաղաքական պայմաններում վարչակարգի պահպանման նպատակով: Սա կարող է տեղի ունենալ հատկապես այն պարագային, երբ էներգիայի մատակարարը մենաշնորհային դիրքեր է զբաղեցնում տվյալ շուկայում, քանի որ նրանից կախվածությունը վերածվում է նաև քաղաքական լծակների, որի շրջանակներում նաև մատակարարող երկիրը կանխում է դրսից միջամտությունը իր կողմից տարվող ներքին, ինչու ոչ նաև, արտաքին քաղաքականությանը:

Ուսումնասիրելով ԵՄ-Ադրբեջան երկկողմ հարաբերությունները, ակնհայտ է դառնում, որ ԵՄ կողմից տարվող քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ էականորեն տարբերվում է ԵՄ՝ այլ երկրների հետ հարաբերություններից ու մոտեցումներից: Ստիպված լինելով դիվերսիֆիկացնել էներգետիկ անվտանգության ոլորտը՝ ԵՄ-ն «աչք է փակում» Ադրբեջանում գործող ավտորիտար վարչակարգի կողմից տարվող քաղաքականության, մարդու իրավունքների, օրենքի գերակայության,

¹⁶ Böttger K., Falkenhain M., *The EU's policy towards Azerbaijan: what role for civil society?*

¹⁷ Böttger K., Falkenhain M., *The EU's policy towards Azerbaijan: what role for civil society?*

ժողովրդավարության անբարենպաստ վիճակի վրա: Սակայն, ասել, թե ԵՄ-ն բոլորովին չի նկատումե այս ամենը, սխալ կլինի, քանզի նույն ԵՄ զեկույցներից կարելի է ծանոթանալ այսօր Ադրբեջանում մարդու իրավունքների, օրենքի գերակայության, ժողովրդավարության վիճակին:

Այսպսիսով, հարց է առաջանում, թե ինչպես է պատահում, որ ԵՄ-ն, պատժամիջոցների ենթարկելով տարածաշրջանային այլ երկրներին, և քաջատեղյակ լինելով Ադրբեջանում տիրող վարչակարգից, այնուամենայնիվ, պատժամիջոցներ չի սահմանում Ադրբեջանի նկատմամբ, ավելին, շարունակում է խորացնել երկկողմ հարաբերությունները՝ վերացնելու կախվածությունը ՌԴ-ից և նրա գերիշխող դերակատարությունը դեպի Եվրոպա էներգառեսուրսների մատակարարման ոլորտում: Սրա պատճառն այն է, որ ադրբեջանական կողմը չի ձգտում հարաբերվել ԵՄ-ի հետ քաղաքական ոլորտում, քանի որ վերջինիս ավելի ձեռնտու տարբերակ է խորացնել էներգետիկ ոլորտում հարաբերությունները ԵՄ-ի հետ՝ պահպանելով նաև ներքաղաքական կյանքում վարչակարգի երկարակեցությունը: Սրան կարելի է գումարել նաև այն, որ Ադրբեջանը քաջ գիտակցում է իր կարևորությունը ԵՄ-ի համար՝ ողջ Եվրոպայում էներգետիկ անվտանգության տեսանկյունից, արդեն իսկ վստահ լինելով, որ ԵՄ-ն չի հրաժարվի ադրբեջանական էներգակիրներից՝ ավտորիտար վարչակարգի պատճառով: Սրա հետևանքնով է նաև այն, որ Ադրբեջանը, լինելով էներգառեսուրսներով հարուստ երկիր, օգտագործում է այդ հանագամանքը ներքին ու արտաքին անկախությունը պահպանելու նպատակով: Այսպիսով, պատասխանելով սույն հետազոտության հարցին, կարելի է հանգել, նրան, որ ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների հիմքում ընկած է ոչ թե ժողովրդավարությունը, այլ՝ «խողովակաշարերը»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թորոսյան Տ., Միջազգային հարաբերությունների ձևավորման այլընտրանքները հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում, Հայկական Քաղաքագիտական Հանդես, N 2(2), 2011 էջ 18-32.

2. From where do we import energy and how dependent are we?, <https://ec.europa.eu/eurostat/cache/infographs/energy/bloc-2c.html>, (05.06.20).

3. Amnesty International, AZERBAIJAN 2017/2018, <https://www.amnesty.org/en/countries/europe-and-central-asia/azerbaijan/report-azerbaijan/>, (05.06.20).

4. Böttger K., Falkenhain M., The EU's policy towards Azerbaijan: what role for civil society?

5. Delegation of the European Union to Azerbaijan, Federica Mogherini visits Azer-

baijan, https://eeas.europa.eu/delegations/azerbaijan/3585/node/3585_el, (05.06.20).

6. European Council, Belarus: EU prolongs arms embargo and sanctions against 4 individuals for one year, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2019/02/25/belarus-eu-prolongs-arms-embargo-and-sanctions-against-4-individuals-for-one-year/>, (05.06.20).

7. European External Action Service, EU-Azerbaijan relations - factsheet, file:///C:/Users/User/Downloads/eeas_-_european_external_action_service_-_eu-azerbaijan_relations_-_factsheet_-_2019-09-11.pdf, (05.06.20).

8. European Parliament, EU Relations with Armenia and Azerbaijan, [http://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2017/603846/EXPO_IDA\(2017\)603846_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2017/603846/EXPO_IDA(2017)603846_EN.pdf), (05.06.20).

9. European Union; External Action; EU Annual Report on Human Rights and Democracy in the World (Azerbaijan), https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/62282/eu-annual-report-human-rights-and-democracy-world-azerbaijan_en, (05.06.20).

10. FACTS AND FIGURES ABOUT EU-AZERBAIJAN RELATIONS; IMPORTANT ENERGY PARTNER, https://eeas.europa.eu/sites/eeas/files/eap_factsheet_azerbaijan_eng.pdf, (05.06.20).

11. Freedom House, Freedom in the World; Azerbaijan, <https://freedomhouse.org/country/azerbaijan/freedom-world/2020>.

12. Freedom House, Country Profile; Nations in Transit Score; Democracy Score in Azerbaijan, <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/azerbaijan>, (05.06.20).

13. Merabishvili G., The EU and Azerbaijan: Game on for a more normative policy?, *CEPS Policy Brief*, No. 329, March 2015.

14. А.В. Коротун, Проблемы и перспективы развития Европейского Союза в начале XXI века, с. 76. From where do we import energy and how dependent are we?, <https://ec.europa.eu/eurostat/cache/infographs/energy/bloc-2c.html>, (05.06.20).

ВЫЗОВЫ И ОСОБЕННОСТИ ОТНОШЕНИЙ МЕЖДУ ЕВРОПЕЙСКИМ СОЮЗОМ И АЗЕРБАЙДЖАНОМ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

К.Р. Серобян

АННОТАЦИЯ

В статье обсуждается сотрудничество ЕС-Азербайджана в энергетической сфере, политика ЕС в отношении Азербайджана, причины этого, делается попытка выяснить, какое влияние оказывает действующий в Азербайджане режим, их демократические ценности, нарушение прав человека и основных свобод на двустороннее сотрудничество, а также выяснение, что удерживает ЕС от применения санкций в отношении Азербайджана.

Ключевые слова: ЕС, Азербайджан, энергетическая сфера, авторитарная система, демократия.

CHALLENGES AND FEATURES OF EUROPEAN UNION-AZERBAIJAN RELATIONS AT THE CURRENT STAGE

K.R. Serobyán

In the article the cooperation between Azerbaijan and EU, the policy of EU towards Azerbaijan and its reasons are discussed. Here, we attempt to find out what impact has the existing regime, breach of the human rights and fundamental freedoms in Azerbaijan, on the bilateral cooperation, and also, what prevents EU from imposing sanctions on Azerbaijan.

Key words: *EU, Azerbaijan, energy, authoritarian system, democracy.*